ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«01» դեկտեմբերի 2017 թվականի № 147-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի ՀՀ Բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 94 և 2017 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2237 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի նոյեմբերի 08-ի թիվ Ֆ-333/17 գրությունը, «ԱՌԱՔԵԼ-ՍԻՄՈՆ» ՍՊ ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 01-ի թիվ 1 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՌԱՔԵԼ-ՍԻՄՈՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/573 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Հարոյան եղբայրների տուֆի հանքավայրի՝ 1.X=4461254 Y=8426258, 2.X=4461454 Y=8426258, 3.X=4461454 Y=8426558, 4.X=4461254 Y=8426558 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 372689մ^3 տուֆի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-573 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4461250 Y=8426212 H=1176 (h=0), 2.X=4461494 Y=8426212 H=1181.0 (h=0), 3.X=4461494 Y=8426593 H=1181.0 (h=0), 4.X=4461446 Y=8426593 H=1179.0 (h=0), 5.X=4461233 Y=8426583 H=1171.8 (h=0), 6.X=4461254 Y=8426500 H=1174.5 (h=0), 7.X=4461247 Y=8426325 H=1176.0 (h=0) (տրված են WGS-

84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 9.3 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 7453,8 մ^3 տուֆի մարվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ 573 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Հարոյանի եղբայրների տուֆի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ 573 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ